

ՊԵՏՈՒԹԵԱՆ ԷՈՒԹԻՒՆՆ ՈՒ ՁԵԻԵՐԸ ¹⁾

Իւրաքանչիւր մտածող մարդ, ուր որ էլ ապրելիս լինի, ընական է, որ աշխատէ որոշել, թէ ի՞նչ յարաբերութեան մէջ է գտնուում իւր շրջապատի հետ: Ներկայումս ամեն մի մարդ (սակաւ բացառութեամբ) ապրում է որևէ պետութեան մէջ և այսպէս թէ այնպէս շփման մէջ է գտնուում այդ պետութեան հետ. և այդ շփումը, այդ յարաբերութիւնը սկսած ծննդեան օրից մինչև մահը ոչ մի բնական զոհաբերում չէ իրօք, եթէ լաւ դիտելու լինինք, կը տեսնենք, որ հենց ծննդեան առաջին վայրկեանից սկսած գործ ենք ունենում պետութեան հետ անուղղակի կերպով. մեր աշխարհ գալը թեթևացնողն ու մեր կենդանի շունչ լինելու առաջին վկան մանկաբարձուհին է. սակայն ճիշտագոյն և ճշմանից է ստացել այդ մանկաբարձուհին իւր արհեստով պարապելու իրաւունքը. չէ որ պետութիւնից. և չէ որ հենց պետութեան միջոցով էլ ստացել է նա իւր գիտութիւնը: Այնուհետև մեր թէ սկզբնական, թէ միջնակարգ և թէ բարձրագոյն կրթութիւնը ստանում ենք զանազան դպրոցներում և համալսարաններում, որոնք պահուում են կամ պետութեան միջոցներով, կամ նրա մասնակցութեամբ, թոյլտուութեամբ ու հսկողութեան տակ: Մեր ուսումը վերջացնելուց յետոյ էլ ինչ կոչում էլ որ ընտրելու լինինք՝ բժիշկ, իրաւաբան և այլն՝ կամ յատուկ թոյլտուութիւն ենք ստանում պետութիւնից, կամ մեր զբաղմունքների բնաւորութիւնը գոնէ անուղղակի կերպով որոշում ու հաստատում է պետութիւնից հաստատուած օրէնքներով, Բացի այս՝ թէ տանը նստած ժամանակ թէ փողոցում ման գալիս մեր կեանքի պահպանողութիւնը երաշխաւորող դարձեալ պետութիւնն է իւր օրգաններով՝ ոստիկանութեան, դատարանների միջոցով, Յանցանք գործելու դէպ-

¹⁾ Վաղափօղով «Введение въ курсъ государственнаго права».

քում էլ մեզ դատողը, պատժողն ու արքայողը դարձեալ պետութիւնն է և այլն և այլն:

Այսպիսով տեսնում ենք, որ ըստ ամենայնի կապուած ենք պետութեան հետ հազարաւոր թելերով: Պետութիւնն օդի նման շրջապատում է մեզ և օդի պէս էլ պահպանում մեր գոյութիւնը: Սակայն, ինչպէս օդը երբեմն կարող է փչացած լինել և վնասել մեր առողջութեանը, բայցայն լ մեր օրգանիզմը, այդպէս էլ պետութիւնը կարող է երբեմն նպաստել մեր զարգացման, երբեմն վնասել, մեր զարգացման-առաջադիմութեան արգելք հանդիսանալ և խեղդել ու կորցնել մեզ: Եւ որովհետեւ այսքան սերտ կապ ունինք պետութեան հետ՝ մինչ մեր գոյութիւնը մեծ կախումն ունի նրանից, անհրաժեշտ է, որ աշխատենք մօտիկից ծանօթանալ պետութեան էութեան, կազմի հետ և պարզել, թէ ի՞նչ դեր է կատարում նա մեր կեանքում:

Ի՞նչ է պետութիւնը. նախ քան այս հարցին պատասխանելը՝ նկատենք, որ մարդ միշտ էլ այնպիսի մեծ կախումն չէ ունեցել պետութիւնից, ինչպէս ներկայումս է. և դեռ էլ աւելի—եղել է ժամանակ, երբ պետութիւն չի էլ եղել. նոյն իսկ այժմ կենդրոնական Աֆրիկայում, որը դեռ ևս ազատ է մնացել Եւրոպացիների ձեռքից, վայրենի ցեղեր կան, որ իսկի չգիտեն էյ, թէ ի՞նչ բան է պետութիւնը: Իսկ Հիմալայեան լեռներում, Ձինաստանի արևմտեան կողմերում, Հարաւային Աֆրիկայի պամպաներում մինչև այժմ էլ բազմաթիւ բնակիչներ կան, որոնք թէև համարւում են այս կամ այն պետութեան կազմի մէջ մտած, բայց իրօք շատ քիչ են ննթարկւում նրանց: Ողիսականում ցիկլոպների կեանքի նկարագրի մէջ մարդու նախապետական դրութիւնը բնորոշած է հետևեալ կերպով.

«Նրանք ոչ ժողովրդական հաւաքումներ, ոչ էլ ընդհանուր խորհուրդներ ունին.

Ազատ ապրում են մութ անձանքերում, կամ բարձր լեռների վէս կատարներում.

Ամեն ոք առանց մի հաշիւ տալու՝ իշխում է իւր կնոջն ու որդիներին,

Ճանաչելով միմիայն իւր անձը՝ ուրիշների մասին հոգ էլ չի տանում»:

Պարզ է ուրեմն, որ եղել է ժամանակ, երբ պետութիւն չի եղել և չի էլ կարելի երաշխաւորել, դրականապէս ասել, որ

ամեն ժամանակ էլ կը լինի. հետևապէս պետութիւնը մի պատմական երևոյթ է, որ ուրիշ պատմական երևոյթների պէս ունի իւր ծագումը, զարգացումը և վախճանը: Ներկայումս, կարելի է ասել, որ պետութիւնը իւր զարգացման ամենաբարձր աստիճանին է հասել:

Ողիսականի ցիկլոպների կազմակերպութիւնը չի կարելի պետական անուանել, որովհետեւ նրանք ապրում էին փոքր ընտանիքներով. պետական չի կարելի անուանել նաև Աթենացոց կազմակերպութիւնը մինչև Սոլոնի բարենորոգումները և Հոովմայեցիներին՝ մինչև Սերվիոս Տուլլիոսի բարենորոգումները. որովհետեւ, չնայած, որ այդ երկու ազգերն էլ այդ ժամանակ հասարակական զարգացման նշանաւոր աստիճանի վերայ էին, բայց ժողովուրդը բաժանուած էր ցեղերի, որոնք թէև բաւական մեծ էին, բայց էլի սահմանափակ ընտանիքներով: Դժուար է պետական անուանել նաև բազմաթիւ հովուական թափառական ցեղերի կազմակերպութիւնները:

Պետութեան բնորոշող առաջին նշանը է որոշ տէրրիտօրիան (որոշ տարածութիւն). քանի դեռ ժողովուրդը կամ ցեղն աստանդական կեանք է վարում, պետութեան գաղափարը տեղ ունենալ չի կարող, նա տեղ չունի նոյն իսկ այն ժամանակ, երբ ժողովուրդը կը բռնէ որոշ տերրիտօրիա, բայց իւրաքանչիւր անհատ իրեն աւելի շատ ընտանիքի, ցեղի անդամ կը համարի, քան որևէ տերրիտօրիական կազմակերպութեան: Այս դէպքում թէև իսկական մտքով պետութիւն չկայ դեռես, բայց կան ծիւր, որոնցից կարող է զարգանալ պետութիւնը: Այսպիսով ուրեմն — տերրիտօրիան առաջին նշանը հերիք չէ պետութեան գաղափարը պարզելու. տերրիտօրիան պէտք է բնակչութիւն ունենայ և այդ ամբողջ բնակչութիւնը պէտք է իբրև մի մարմին կազմակերպուած լինի: Ուրեմն պետութեան երկրորդ նշանը՝ ժողովուրդն է. իսկ երրորդ և անհրաժեշտ նշանը՝ իշխանութիւնը. մի՛ իշխանութիւն, որը կազմակերպում է այդ տերրիտօրիայի բնակչութիւնը ի մի ամբողջ, ի մի ժողովուրդ:

Սակայն ամեն իշխանութիւն չի կարելի պետական համարել. այսպէս օր. հօր, մարդու իշխանութիւնն ընտանիքում, ուսուցիչն՝ դպրոցում, քահանային՝ ծխի մէջ, նախագահի իշխանութիւնը որ և է ժողովում ևայլն, չեն հարկադրում մեզ այդ ընտանիքը կամ ծուխը պետութիւն ճանաչել՝ չնայած որ նրանք ապրելիս լինեն նոյն իսկ մի որոշ տերրիտօրիայի վերայ: Զանազանութիւնն այն է, որ այդպիսի իշխանութիւնը

անկախ չէ, այլ կախումն ունի մի աւելի բարձր-պետական իշխանութիւնից. հօր կամ մարդու իշխանութեան քանակն ու որակը սահմանուած ու սահմանափակուած են պետութեան մէջ իշխող օրէնքներով: Հին ժամանակներում օրինակ հայրը լիակատար իրաւունք ունէր ծախելու կամ սպանելու որդուն. նոյն իրաւունքով օգտուում էր նաև մարդը կնոջ վերաբերմամբ. սակայն ներկայումս չկայ այլ ևս այդ իրաւունքները. և չնայած հօր կամ մարդու բռնն ցանկութեանն ու կնոջ կամ որդու անպայման հնազանդութեանը՝ նման վայրենի ցանկութիւններ անիրագործելի են, որովհետև իւրաքանչիւր անհատի կեանքի ապահովութիւնն ու պահպանութիւնը իրեն վերայ է վերցրել պետութիւնը. իսկ եթէ նման դէպքեր պատահելու էլ լինին, իշխող օրէնքների համաձայն յանցաւոր կը ճանաչուի գործադրողը և կը պատժուի պետութեան օրգանների-ոստիկանութեան և դատարանների միջոցով: Իսկ պետական իշխանութիւնն, ընդհակառակն, անկախ, բարձրագոյն իշխանութիւն է և չի ենթարկուած ոչ մի ուրիշ իշխանութեան: Այսպիսով ներկայումս ամեն մի պետութեան մէջ պետական իշխանութիւնն անպայման բարձր է հայրական իշխանութիւնից: Սրան չի հակասում, ի հարկէ այն փաստը, որ պետական իշխանութիւնը պատմականօրէն առաջացել է ընտանեկան իշխանութիւնից:

Պետական իշխանութիւնը տեւրիտօրիայում ապրող բնակիչներին միացնում, մի ամբողջ ժողովուրդ է դարձնում: Ժողովուրդը գաղափարը շատ անգամ խառնում են ազգ, ազգութիւն գաղափարների հետ և մէկը միւսի տեղ անխտիր գործածում. ի հարկէ այդ սխալ է, որովհետև ժողովուրդը և ազգ՝ տարբեր նշանակութիւն ունեն: Ազգ է կոչւում այն մարդկանց միութիւնը, որոնք կապուել են շնորհիւ իրենց ծագման նոյնութեան—ընդհանրութեան. և որոնք սովորաբար մի ընդհանուր լեզու ունին: Այսպէս գերմանական ազգ ասելով՝ հասկանում ենք թէ Գերմանիայում, թէ Աւստրիայում, թէ Շվեյցարիայում և թէ ուրիշ տեղեր ապրող այն բոլոր գերմանացիներին, որոնք մի ընդհանուր ծագումն և լեզու ունին: Սրանց մէջ չենք հաշոււմ, ի հարկէ, Գերմանիայում ապրող ուրիշ տարրերի—Լեհերին, Դանիացիներին, Էլզասցիներին և այլն: Իսկ գերմանական ժողովուրդը ասելով հասկանում ենք, ընդհակառակը, այն բոլոր և Գերմանացիներին, և Լեհացիներին, և Դանիացիներին, և Էլզասցիներին և այլն, որոնք ապրում են Գերմանիայի տեւրիտօրիայում՝ չնայելով որ դրանք բոլորովին

տարբեր լեզուներով են խօսում և տարբեր կրօններ դառնում Նոյնը տեսնում ենք և Զուլիցերիայում, ուր պետութեան կազմի մէջ մտնում են և գերմանացիներ, և ֆրանսիացիներ, և իտալացիներ, որոնցից իւրաքանչիւրն ունի իւր լեզուն: Նոյն բանը նկատում ենք նաև Աւստրիայում և Ռուսաստանում: Կարելի է ասել ուրեմն, որ ժողովուրդ գաղափարը համեմատաբար աւելի ընդհանուր է, քան ազգ գաղափարը. քանի որ մի երկրի ժողովուրդը կարող է բաղկացած լինել մի քանի ազգերից: Ժողովրդի բնորոշ տարրը՝ տերրիտորիան է անկախ լեզուից, ծագումից ու կրօնից. իսկ ազգի բնորոշ տարրը՝ ծագումը, լեզուն և մեծ մասամբ էլ կրօնը՝ անկախ տերրիտորիայից: Կրօնը կամ լեզուն չէ, որ անհրաժեշտ ընդհանուր պէտք է լինի մի ժողովրդի համար, այլ ընդհանուր ժողովրդական գիտակցութիւնը. գիտակցութիւն, որը բոլորին ճանաչել տայ, թէ մի ժողովրդի անհատներ են, թէ մնուած, մեծացած ու կրթուած են մի ընդհանուր պատմական կեանքով: Այսպէս Զուլիցերական գերմանացին, ֆրանսիացին և իտալացին իրենց Զուլիցերացի են անուանում և երբէք գերմանացի, իտալացի կամ ֆրանսիացի *): Ի հարկէ այդպիսի ընդհանուր գիտակցութիւն — զգացմունք կարող է մշակուել միմիայն յարատեւ ընդհանուր պատմական կեանքի միջոցով: Իսկ նուաճման միջոցով կազմուած պետութիւնների մէջ, որ ապրում են միասին տիրող և պարտութեամբ ենթարկուած ազգութիւններ, այդպիսի ժողովրդական զգացմունք սկզբից և եթ գոյութիւն ունենալ չի կարող, այլ հետզհետեւ առաջ կը զայ և հիմնաւոր կը դառնայ այն դէպքում միայն, երբ կը մշակուի ընդհանուր ժողովրդական գիտակցութիւն:

Գումարելով ցոյց տուած բոլոր նշանները՝ կարելի է ասել, որ պետութիւնը որոշ տերրիտորիայում ապրող մարդկանց մի կապ է, որոնք մի ընդհանուր, բարձր և անկախ իշխանու-

*) Հայերէնում ֆրանսիացի, իտալացի, գերմանացի և այլն ասելով՝ հասկանում ենք ևս այդ ազգութեան պատկանող անհատի, ևս այդ տերրիտորիայում ապրող ժողովրդի անհատի. օր. ֆրանսիացի դորժ ենք թծում և ֆրանսիական ծագումն ունեցող, այդ ազգին պատկանող անհատի համար (թէկուզ նա ապրելիս լինի ճապոնիայում) և ֆրանսիայում ծնուած մեծացած անհատի համար, ուրիշ խօսքով այդ տերրիտորիայում ապրող ժողովրդի անհատի համար (թէկուզ լինի նա ուրիշ ազգից): Ուղիղ ենք գործածում Լեհ-լեհացի, Ռուս-ռուսաստանցի, Պարսիկ-պարսկաստանցի, Տաճիկ-տաճիկաստանցի, Յոյն-յունաստանցի և այլն և այլն. Ծ. Բ.

թեան միջոցով միացել, մի ժողովուրդ են դարձել:

Այս որոշումը միանգամայն կարելի է վերագրել թէ ներկային և թէ պատմական ժամանակներում գոյութիւն ունեցած պետութիւններին. բայց այդ որոշման տակ չեն մտնի այն կազմակերպութիւնները, որոնց մէջ բոլորովին պարզ կերպով նկատելի է ծնունդ պետական կազմակերպութեան նշաններ-ծիւեր: Մակայն նման անյաջողութեան պատահում է մարդ ամեն ժամանակ, երբ հարկ է լինում բացատրել որոշ սահմաններից դուրս որևէ զարգացող երևոյթի նշաններն ու էութիւնը: Հենց այս պատճառով էլ առաջ բերած բացատրութիւնը գիտութեան մէջ ընդունուած չէ բոլորի կողմից: Ձանազան գիտնականներ զանազան որոշումներ են տուել պետութեան գաղափարը պարզաբանելու համար. և այդ առաջանում է նրանից, որ մինչև այժմ պետութեան էութիւնը լաւ չէ պարզած՝ չնայած որ իւրաքանչիւր պետութեան կազմի մանրամասնութիւնները հանգամանօրէն ուսումնասիրուած են: Գիտնականներից ոմանք էլ իրենց որոշման մէջ մտցրել են պետութեան գոյութեան նպատակի նշաններ: Այսպէս օրինակ ռուս նշանաւոր գիտնական Չիչերինը իւր «Курсъ государственной науки» գրքում այսպիսի որոշումն է տալիս. «Պետութիւնը կապ է օրէնքով միացած և իրաւական ամբողջութիւն դարձած մի ժողովրդի, որին կառավարում է մի բարձր իշխանութիւն ընդհանուրի օգտի—բարիքի համար»: Այս որոշումն աւելի լայն է, ընդարձակ է, քան նախորդ որոշումը, որովհետեւ սրա մէջ չկայ քերիւսօրիայի գաղափար, թէև ինքը պ. Չիչերինն էլ ընդունում է, սակայն հարկ չի համարում մտցնել որոշման մէջ, բայց միւս կողմից էլ շատ նեղ է, որովհետեւ այս որոշման մէջ չեն մտնի և դուրս կը մնան այն բոլոր պետութիւնները, որոնք կամ որոշ նպատակ չունին, կամ եթէ ունին էլ՝ այն չէ, ինչ որ շեշտում է պ. Չիչերինը: Առհասարակ անյարմար է որոշման մէջ մըտցնել մի այնպիսի նշան, որի գոյութիւնն ապացոյցի կարօտ է: Պատմութիւնից շատ լաւ յայտնի է ներկայումս գոյութիւն ունեցող ամեն մի պետութեան առաջ գալու և զարգանալու պատճառները. յայտնի են նաև այն նպատակները, որոց ձգտել են անհատներ կամ խմբեր իրենց պետական գործունէութեան շրջանում. սակայն իւրաքանչիւր պետութիւն իբրև մի ամբողջութիւն ունեցե՞լ է, կամ ունի՞ արդեօք որոշ նպատակ. կամ եթէ ունի, նոյնն է արդեօք, ինչ որ պ. Չիչերինի ցոյց տուած նպատակն է: Մանաւանդ եթէ աչքի առաջ ունենանք այն հան-

գամանքը, որ պետութիւնները զարգացել են աստիճանաբար՝
 գլխաւորապէս նուաճման միջոցով, կարելի է խօսել արդեօք
 նուաճողների և նուաճուածների մի ընդհանուր նպատակ ու-
 նենալու մասին. և եթէ կարելի է, միթէ այդպիսի մի նպա-
 տակ կարող է ընդհանուր բարիք նկատուել թէ նուաճողների
 և թէ հարստահարուած նուաճուածների համար. ի հարկէ ոչ:
 Պարզ է ուրեմն, որ պ. Ջիշերինի որոշումը պէտքական կարող
 է համարուել բացատրելու, թէ ի՞նչ պէտք է լինի պետութիւնը
 և ոչ թէ ի՞նչ է, կամ ի՞նչ է եղել պետութիւնը:

Հ. ՅՈՎԱԿԻՄԵԱՆ

(Վերջը միւս անգամ)